ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2017թվական N 6-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի ԹԻՎ -2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է** '

1.Հաստատել Թալին համայնքի ավագանու 2017թ. մարտի 23-ի թիվ- 2 հերթական նիստի օրակարգը հետևյալ տեսքով '

1)Գույքահարկի և հողի հարկի արտոնություն տրամադրելու մասին

2)Թալինի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին

3)Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին

4)Թալին համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նպատակային նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին ;

5)Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-003-223-004 ծածկագրի տակ գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

23 մարտի 2017թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ**

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**23 մարտի 2017թվական N 7-Ա**

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին >> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի , <<Հողի հարկի մասին >>ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822 -Ն որոշման դրույթներով , հիմք ընդունելով համայնքի բնակիչներ ՝ Հովհաննես Համբարձումյանի 03.02.2017թ. դիմումը, Էմիլ Վարդանյանի 20.03.2017թ. դիմումը , Ռալիկ Արսենի Մկրտչյանի 20.03.2017թ. դիմումը և Լուսյա Մանուկի Ավագյանի 20.03.2017թ. դիմումը , **համայնքի ավագանին որոշում է ՝**

1.Թալին համայնքի բնակիչ Հովհաննես Ներսեսի Համբարձումյանին պատկանող ԳԱԶ 24 մակնիշի 24 LS 374 պետ . համարանիշի ավտոմեքենայի գույքահարկի ապառքի ՝ 25454 /քսանհինգ հազար չորս հարյուր հիսունչորս / դրամի չափով տրամադրել արտոնություն :

2.Թալին համայնքի բնակիչ Էմիլ Ալբերտի Վարդանյանին պատկանող Մերսեդես –Բենս 260 E մակնիշի 34 DM 064 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի ապառքի ՝106667 /հարյուր հազար վեց հարյուր վաթսունյոթ / դրամի չափով տրամադրել արտոնություն :

3.Թալին համայնքի բնակիչ Ռալիկ Արսենի Մկրտչյանին պատկանող CHRUSLER LE BARON մակնիշի 34 AS 831 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի ապառքի ՝ 133 161 /հարյուր երեսուներեք հազար հարյուր վաթսունմեկ / դրամի չափով տրամադրել արտոնություն :

4.Թալին համայնքի բնակիչ Լուսյա Մանուկի Ավագյանին տրամադրել արտոնություն հողի հարկի ապառքի ՝ 37903 /երեսունյոթ հազար ինը հարյուր երեք / դրամի չափով :

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

23 մարտի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2017թվական N 8-Ա

# ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական կապերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է** '

1.<<Թալինի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> 26.12.2016թ. N 58-Ա որոշման 1-ին հավելվածում կատարել փոփոխություն ' ավելացնել մամուլի խոսնակի հաստիք կես դրույքով , պաշտոնային դրույքաչափը 36 376 դրամ :

2.Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը կատարված փոփոխություններով ' համաձայն հավելվածի :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017թ. ապրիլի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

23 մարտի 2017թ.

Հավելված
Ծայլին համայնքի ավագանու
2017թ. մարտի 23-ի թիվ 8-Ա որոշման

Ծայլինի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Դրույքաչափը |
|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 250000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 170000 |
| 3 | Համայնքապետի օգնական | 150000 |

Աշխատակազմ

| | | | |
|---|---|---|---|
| 4 | 1.2-1 | Աշխատակազմի քարտուղար 1.2-2 | 170000 |
| 5 | 2.3-1 | Գլխ. մասնագետ հաշվապահ | 120000 |
| 6 | 2.3-2 | Գլխ. մասնագետ իրավաբան | 120000 |
| 7 | 3.1-5 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 8 | 3.1-6 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 9 | 3.1-7 | Առաջատար մասնագետ | 100 000 |
| 10 | 3.2-5 | Առաջին կարգի մասնագետ | 90000 |
| 11 | 3.2-7 | Առաջին կարգի մասնագետ | 90000 |
| 12 | 3.2-8 | Առաջին կարգի մասնագետ | 90000 |
| 13 | 3.2-9 | Առաջին կարգի մասնագետ | 90000 |

Ներքին աուդիտի բաժին բաժին

| | | | |
|---|---|---|---|
| 14 | 2.1-3 | Բաժնի պետ | 122000 |

ՔԿԱԳ բաժին

| | | | |
|---|---|---|---|
| 15 | 1.3-1 | Բաժնի պետ | 256625 |
| 16 | 3.2-6 | Առաջին կարգի մասնագետ | 133605 |

Տեխնիկական սպասարկման անձնակազմ

| | | |
|---|---|---|
| 17 | Գործավար | 100000 |
| 18 | Օպերատոր | 38952 |
| 19 | Հնցապան/սեզոնային 6 ամսով / | 77904 |
| 20 | Պահակ-կնտեսվար | 75000 |
| 21 | Հավաքարար | 75000 |
| 22 | Վարորդ | 78000 |
| 23 | Մամուլի խոսնակ | 32376 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 2 629 462 |

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
23 մարտի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2017թվական N 9-Ն

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակռավրման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի , ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ , 68-րդ հոդվածների պահանջներով , ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման >> կարգի 5-րդ գլխի պահանջներով , Թալին համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է** '

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և հաստատել մեկնարկային գին համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող տասներորդ օրվանից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին

23 մարտի 2017թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2017թ. մարտի 23-ի թիվ 9-Ն որոշման

| Լոտ | Հողամասի գործառնական նշանակությունը | Գտնվելու վայրը | Ծածկա-գիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Օժանդակ շինություն | 1 քմ-ի մեկնարկային գինը /ՀՀ դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պահեստարաններ | Ք. Թալին Գայի 68 | 223-004 | 2,3399 | Արդյունաբեր. ընդերք. և այլ արտադր. նշանակության | չկա | 528 |
| 2 | Խառը կառուցապատման | Ք. Թալին Խանջյան 15/21 | 059-114-հզ | 0,0080 | Բնակավայրի | չկա | 528 |

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
23 մարտի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2017թվական N 10-Ա

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով , ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8 –րդ կետի դրույթներով , նկատի ունենալով , որ օտարվող հողամասը ընդգրկված չի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում , չի գտնվում ինժեներատեխնիկական , տրանսպորտային և այլ կոմունիկացիոն օբյեկտների օտարման գոտիներում , չի հակասում քաղաքաշինական նորմերին , չի առաջացնում կամավոր կամ հարկադիր սերվիտուտ , չի խանգարում այլ անձանց իրավունքները , հիմք ընդունելով Արտուշ Թադևոսի Վարդանյանի և Սուրեն Գագիկի Վարդանյանի դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը ,**համայնքի ավագանին որոշում է `**

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի սեփականություն համարվող 02-003-041-258-ից ծածկագրով , Մ. Քոթանյան 11/20 հասցեում գտնվող 152 քմ բնակավայրի նշանակության , խառը կառուցապատման հողատարծքը ուղղակի վաճառքով `

1.1հողի արժեքը - 528 դրամ x 152 քմ = 80256 դրամ

1.2 գույքի գրանցման ծախսեր 56000 դրամ

Ընդամենը 136256 դրամ արժեքով օտարել Արտուշ Վարդանյանին և Սուրեն Վարդանյանին ։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից ։

*Կողմ -7* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*1.Արամյան Արամ*

*2.Ավետիսյան Գաբրիել*

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
23 մարտի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

*23 մարտի 2017թվական N 11-Ն*

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-003-223-004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ և 31-րդ կետերի դրույթներով , ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920 –Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է '**

**1**.Տալ համաձայնություն 02-003-223-004 ծածկագրի տակ գտնվող 2,3399 հա մակերեսով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասը փոփոխել էներգետիկ նշանակության ;

**2**.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող տասներորդ օրվանից

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Ավետիսյան Գաբրիել

3.Գասպարյան Արարատ

4. Գրիգորյան Աշոտ

5.Գրիգորյան Նարեկ

6. Գրիգորյան Մանվել

7.Եսայան Հակոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ' Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք. Թալին
23 մարտի 2017թ.